

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը
(պատմա-ազգագրական ուսումնասիրություն), *Անթիլիաս*, 2006, 260 էջ:

Հայագիտության համար գրեթե անհայտ Անտիոքի մերձակա Ռուճի հովտի հայկական բնակավայրերի պատմական, էթնո-լեզվական և էթնո-դավանական բարդ ու խճճված հիմնահարցերին անդրադառնալն ինքնին համարձակ քայլ է, քանի որ Անտիոքի մերձակա Ռուճի հովտի հայության պատմությունը, ազգագրությունն ու ժողովրդագիտությունը ցարդ հատուկ և բազմակողմանի ուսումնասիրության չեն ենթարկվել: Այդ առումով թափաքիվ գրքերի և հատկապես «Քեսապ» ժողովրդագիտական եռահատորյակի սիրիահայ վաստակաշատ հեղինակ, պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Չոլաքյանի սույն ուսումնասիրությունը «Ռուճի հովտի հայ գաղթականության պատմաազգագրությունը հանգամանորեն ներկայացնելու առաջին փորձն է», - գրում է հեղինակը (էջ 5): Սակայն հեղինակի համեստորեն արտահայտած այդ «փորձը» շուրջ 260 մեծադիր էջից բաղկացած պատկառելի մի լուրջ ուսումնասիրություն է, իր բնույթով եզակի մի աշխատություն:

Այն առաջին անգամ լույս աշխարհ է հանում Հայ եկեղեցու և ընդհանրապես հայության կողմից լքված ու մոռացված Ռուճի հովտի հայ էթնիկ խմբի անցյալն ու ներկան՝ նոր էջ բացելով հայ ժողովրդի պատմա-ազգագրության բնագավառում:

Աշխատությունը թաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերից, հավելվածից, հեղինակի իսկ ձեռքով գծագրված մանրամասն քարտեզներից և ազգագրական բնույթի բազմաթիվ լուսանկարներից:

Ներածության մեջ հեղինակն ընդհանուր ակնարկով ներկայացնում է Անտիոքի և դրա շրջակայքի հայ գաղթականության վերաբերյալ իր օգտագործած աղբյուրագիտական գրականության տեսությունը, որն ընդգրկում է՝ 1) դիվանային նյութեր, հիմնականում Բերիոթեմի Առաջնորդարանի, Լաթաքիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու, Հալեպի Տերրա Սանտա ֆրանչիսկյան վանքի, Կնիեի լատինաց վանքի անտիպ նյութերը, 2) մենագրություններ և զրբք եր (հայերեն, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն), 3) պարբերական մամուլի հոդվածներ և տեղեկագրեր, 4) պարբերական մամուլի նյութեր:

Տպագիր և անտիպ այդ վիթխարի գրականությունը հիմք ընդունելով և իր անձնական երկարամյա դաշտային գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հմտորեն համադրելով՝ Հ. Չոլաքյանը շարադրել է ծավալուն և բազմապլան այդ խիստ հետաքրքիր և ինքնատիպ ուսումնասիրությունը:

Աշխատության առաջին գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Անտիոքի շրջակայքի հայ գաղթականության պատմությունը՝ սկսած Տիգրան Մեծի ժամանակներից, եոթ վերջինս հովանավորել է Ասորիքի քաղաքները: Հայհռոմեական պատերազմի հետևանքով Ասորիքն անցել է հաղթական հռոմեացիների գերիշխանության տակ: «Սակայն, - ինչպես նշում է հեղինակը, - Ասորիք էն Մեծն Տիգրանի քաշուելէն ետք՝ հայ տարր մը շարունակեց իր գոյութիւնը պահել այս կողմերը» (էջ 29):

Հ. Չոլաքյանի իր փաստաշատ ուսումնասիրությունը հասցնում է մինչև XI դ., երբ հայերը մեծ դեր են ունեցել այդ վայրերում, եոթ խնդրո առարկա տարածքը հաջորդապար կառավարել են Բյուզանդական կայսրության հայազգի կառավարիչները, երբ Կիլիկիայի և հյուսիսային Ասորիքի հայ իշխանու-

թյուններն ու վանքերը, ինչպես նաև քաղաքաբնակ և գյուղական շրջանների հայերը օգնության ձեռք են մեկնել խաչակիր բանակներին, որոնք և նվաճել են Անտիոքը:

Հեղինակը, հիմնվելով հայ, արաբ և այլազգի պատմիչների վկայությունների վրա, ներկայացնում է հայ հոծ գաղթականության պատկերը Լատին դքսության, ապա՝ Էյուբյան, մամլուքյան և օսմանյան տիրապետությունների տարին երին՝ պատմական իրադարձությունները հասցնելով մինչև XIX դարի կեսերը, եոթ թուրք ու թուրքմեն աղաների տիրապետության օրոք հայկական բազմաթիվ բնակավայրեր, հողատարածքներ, աղբյուրներ, ջրաղացներ և արոտավայրեր զավթվել են հայերից, որի հետևանքով շատերը հեռացել են այդ վայրերից՝ նվազեցնելով տեղի հայության թվաքանակը:

Աշխատության երկրորդ գլխում առանձին թափանցումով ներկայացվում են Ռուճի հովտի հայաբնակ գյուղախմբերը. Հարեմ ու Սալգին՝ հյուսիսում, Օրդուի և Կուսեյրի թուրքմենաբնակ շրջանների հայկական գյուղերը՝ Արֆալի, Յամադի, Գոչի, Վերին Թընգըրի, Կոնդունա, Բուրջ և Արմանջո, Բադամայի սարահարթի գյուղակները՝ Կոմդայա, Մեշթե, Այն Էլ-Հոր և Բսաբըթ: Իսկ առանձին բաժիններ նվիրված են Յակուբիենի, Կնիե և Ջըսըր Շուղուր բնակավայրերի հայությանն սպառնացող վտանգին 1909 թ. հայկական կոտորածների ընթացքում:

Երրորդ գլխում հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանությունից հետո Անտիոքի հայ բնակչության մնացորդացի բնակավայրերի ԵՍՍՀ-ումները՝ Սվեդիայի կամ Մուսա լեռան գյուղախումբը, Քեսապը՝ իր գյուղերով, Արամոն, Ղնեմիեն, Յակուբիեն, Կնիեն, որոնք իրենց ծագումով ու պատմությամբ նույն զանգվածի մնացորդներն են: Հեղինակը հետադարձ հայացք է գցում, անդրադառնալով X-XII դ. Անտիոքի հայ գաղթականությանը, երբ նրանք, տեղափոխվելով Հայաստանի տառապի գավառներից, հյուսիսային Ասորիքից և եփրատացվոց երկրներից, իրենց հետ բերել են հայերենի տառեր ուրակներ: Այստեղ հեղինակը, լեզվաբանական նուրբ վերլուծությունների ենթարկելով իր դաշտային գրառումների խոսակցական տվյալները, հիմնավորում է այն միտքը, որ շրջանի լատինալոր խոսքում առկա է պարսկերենից և քրդերենից ուղղակի փոխառությունների մի շերտ, որը չէր կարող գոյանալ նոր պայմաններում: Տարբեր բնակավայրերի հայեր, իրար հետ ապրելով, նույնացրել են իրենց խոսվածքը: Իսկ Ռուճի հովտի հայերի արաբախոսությունը, ըստ հեղինակի, 100-200 տարիների պատմություն ունի: Թեպետ XIX դ. կեսերին այդ վայրերում արաբախոսությունը տիրապետող է դարձել, սակայն լատինալոր շարունակել է գոյատևել ընտանիքներում, հատկապես Արֆալը, Յակուբիե և Կնիե գուտ հայկական գյուղերում: Իր այդ միտքը հաստատելու համար Հ. Չոլաքյանը հանգամանորեն քննության է առնում Ռուճի հովտի հայկական բնակավայրերի լեզվական առանձնահատկությունները և եզրակացնում. «Թէեւ Ռուճի հովտի հայերը Անտիոքի միւս հայկական կղզեխումբերէն կը տարբերին արաբախոսութեամբ, բայց զրոյցները, աւանդութիւնները եւ բերնէ-բերան հասած պատմութիւնները ցոյց կու տան, որ անոնք մեմլուքեան եւ օսմանեան իշխանութեան դարերուն իրարմէ տարանջատուած նոյն մեծ զանգուածին մէկ մասն են: ...Ծերերը կը վկայեն, որ Մեծ Եղեռնէն առաջ շատ արֆալցիներ, եագուպիեցիներ եւ գնիեցիներ բարբառով կը խօսէին քեսապցիներու հետ: Այսինքն արաբերէնի զօրաւոր ազդեցութեամբ հայերէն մը կը խօսէին քեսապցիներուն հետ» (էջ 116): Երախտաշատ ազգագրագետ Հակոբ Չոլաքյանը հանգամանորեն քննության է առնում նաև այդ գյուղերի տապանաքարերի կառուցվածքը, բնակարանների հատակագծային առանձնահատկությունները, սենյակների չափերը, թոնրատուները, մուրները, ծածկը, արտաքին ու ներքին կառուցվածքը, անհրաժեշտ պիտույքները՝ բացահայտելով կենցաղային հետաքրքիր ու ինքնատիպ նորություններ:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է Ռուճի հովտի հայության դավանափոխությանը և օտար միսիոներների գործունեությանը: Հիմք ընդունելով բազմաթիվ արխիվային փաստագրական վկայություններ՝ հեղինակը նշում է. «Թեմական վերին իշխանությունները գրեթե չեն միջամտած վիճակներու կրթական եւ հոգեւոր խնդիրներուն: ...Այս պարապութենէն կ'օգտուին օտար միսիոն արութիւնները, որոնք 1840-ական թուականներու կէտերուն շրջանին հայաբնակ գիւղերը կը թափանցեն: Մանաւանդ Քեսապի, Անտիոքի, Պէլլանի եւ Սուէտիոյ շրջաններուն մէջ բողոքական եւ կաթոլիկ քարոզչութիւնները շատ արագ կերպով մեծ յաջողութիւններու կը հասնին» (էջ 123): 1853 թ. Մայիսի 23-ին հիմնվում է Քեսապի հայ առաջին բողոքական եկեղեցին, իսկ 1857 թ.՝ հայ Կաթոլիկ եկեղեցին:

Շատ չանցած՝ «դաւանափոխութեան նոր ալիք մը սկսաւ շրջաններուն մէջ: Այս անգամ հրապարակի վրայ էին ո'չ միայն ամերիկեան Պորտն ու Կաթոլիկ եկեղեցին, այլեւ Իրլանտական եւ Անկլիքան եկեղեցիներու առաքեալներն ու լատին փատերաները, մանաւանդ վերջիները, որոնք իրենց ետին Հալէպի ֆրանսական ու իտալական հիւպատոսները եւ նիւթական անսպառ հնարաւորութիւններ ունէին» (էջ 125):

Անտիոքի շրջանի մէջ հայերի դավանափոխությունը նոր թափ է ստանում. «Գնիէ գիւղը՝ դաւանական վէճերու սուր պայքար մը կապրի: Լատին Հայրերը ամէն միջոցներու կը դիմեն՝ աւանդապահ ընտանիքները մէկիկ-մէկիկ որսալու համար: 1884-ին կը կառուցուի լատինաց նոր ու մեծ եկեղեցին՝ վանական հարակից թափներով: Գնիէ կը վերածուի լատինաց ամբողջի մը՝ շրջակայքի հայ եւ քրիստոնէայ գիւղերուն մէջ գործելու հսկայական հնարաւորութիւններով» (էջ 129), - գրում է հեղինակը: Սակայն անմիջապէս էր նաև Լաթաքիայի, Արամոյի և Ղնեմիէի հայերի վիճակը:

«1890-ական թուականներուն լատինները կը յաջողին թափանցել Քեսապի շրջանը եւս: Հոն կը կազմուին երկու կաթոլիկ համայնքներ՝ մին լատինաձէս, իսկ միւսը՝ հայաձէս: Լատինաձէս համայնքը կը յաջողի կրթական գործը իր ձեռքը առնել: Լատինները շրջանին մէջ կ'ունենան երկու վանք Քեսապի ու Պաղճաղազի մէջ եւ 5-6 դպրոց կը պահեն» (էջ 132): Այսպիսով, Գնիէ գյուղն ամբողջապէս լատինացվում է, և նույն վտանգն է սպառնում նաև Յակուբիէին:

1890-ական թվականներին լատին քարոզիչների համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում նաև Քեսապի և Մուսա լեռան շրջաններում: Սակայն, ինչպես գրում է հեղինակը. «1890-ական թուականներուն Անտիոքի շրջանին, մասնաւորաբար Մուսա լեռան եւ Քեսապի գիւղերուն մէջ Հնչակեան կուսակցութեան երեւումը ազգային զարթոնքի մը սկիզբը կը նկատուի: Ս. Դ. Հ. Կ.-ն էր, որ ամենէն առաջ ազգային գիտակցութիւն եւ ապրում արթնցուց դաւանական խնդիրներով այնքան թափանցած եղած ու իրարու դէմ թշնամական զգացումներ տածող համագիւղացիներու մէջ: ...Յայտնի է, որ մինչեւ 1890-ական թուականները դպրոցական մեծագոյն ցանցի՝ Հայ Աւետարանական դպրոցներուն մէջ անգլերէն, հայատառ եւ արաբատառ թրքերէն կը դասաւանդուէր. հայերէնը չկար: Հայ Աւետարանականները 1893 էն ետք պարտադիր դարձուցին հայերէնի եւ կարգ մը այլ նիւթերու հայերէնով ուսուցումը իրենց այն գիւղերուն մէջ, ուր հայերը միակ բնակիչներն էին» (էջ 151-152): Իսկ հայ կաթոլիկներն իրենց կրթական գործը վստահել էին լատին ֆրանչիսկյան հայրերին, որոնք միտումնավոր հայերէն չէին դասավանդում:

Այստեղ Հ. Չոլաքյանը կատարում է արժեքավոր դիտարկումներ: Նա իրավացիորեն գրում է, թե. ««Հայ լատին» ըմբռնում չկար, ի հակադրութիւն «Հայ

Աւետարանական» և «Հայ Կաթողիկէ» յարանուանութիւններուն. ատոր բացարձակապէս թոյլատու չէին լատին հայրերը: ...Ազգայնական ամէն նկրտում կարհամարուէր, յառաջ քաշելով այն գաղափարը, թէ լատինականութիւնը համազգայնութիւն է...» (էջ 168): Այսինքն՝ «համազգայնութիւնը» հավասարազոր է ապազգայնացման և հայութիւնից ուժացման, ապա և՛ ձուլման:

Օտարադավանությունն ու օտարաճեսությունը, ազգային իմաստով, շատ ցավալի հետևանքներ են ունենում շրջանի այն հայերի համար, որոնք լրիվ արաբախոս էին: Լաթաքիայի, Արամոյի և Ղնեմիէի արաբախոս հայերը ազգային արժեքների հետ շփվելու առիթ չէին ունեցել: Նույնը կատարվել է նաև Կնիէի և Յակուբիէի լատինադավանների հետ:

Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է այդ շրջանի գյուղերի հետեղեռնյան վիճակին. Արֆալըն, Ջըսըր Շուղուրը, Ընկուզիկը: Վերջին երկուսը պատմության գիրկն էին անցել որպէս հայաբնակ վայրեր, իսկ Յակուբիէն և Կնիէն, թէև տարագրությունից զերծ էին մնացել, սակայն Կնիէն արդէն լրիվ լատինացել էր, իսկ Յակուբիէին նույն ճակատագիրն էր սպառնում:

1943 թ. Սիրիան անկախանում է: 1946 թ. ֆրանսիական զորքերը հեռանում են երկրից: Սկսվում է մեծ հայրենադարձությունը Սիրիայի բոլոր շրջաններից: Ներգաղթում են հայկական երեք կրօնական համայնքներին պատկանող ընտանիքները, նաև՝ Քեսապի, Մուսա լեռան, Արամոյի և Ղնեմիէի մեծամասնությունը, և նրանց համար կանխվում է ուժացման վերահաս վտանգը: Յակուբիէ և Կնիէ գյուղերից հայրենադարձություն չի կազմակերպվում: Տակավին 1930 թվականից Յակուբիէում Հ. Բ. Ը. Միության հովանավորությամբ հիմնադրված Ազգային Վերածնունդ վարժարանը 1967 թ. կապվում է Բերիո թեմի Առաջնորդարանին: Համայնքի արաբախոս երեխաները կամաց-կամաց դառնում են հայախոս: Տարիների ընթացքում զգացվում է Հայրենիք-Սփյուռք կապերի թափարակազդեցությունը:

Վաստակաշատ ազգագրագետ Հ. Չոլաքյանը, հենվելով իր դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքների վրա, նշում է. «Եագուպիէի եւ Եագուպիէցիներուն կեանքին մէջ դրական շատ լայն ըլլալը կը նկատեն գիւղին եւ մօտակայ Գնիէի լատին համայնքի զաւակները, որոնց շատերուն մէջ ազգային ապրումներու զարթօնք մը կայ: Ոմանք կը հպարտանան իրենց հայարմատներով, ոմանք՝ իրենց մականուան հայկական ծագումով, ոմանք տուններու մէջ հայկական յիշատակներ կը պահեն՝ հայկական դրամներ, հայ սուրբերու նկարներ, Հայաստանի դրօշակ: Վերջերս գնիէցիներէն ոմանք կը քաջալերեն հայ աղջկայ, հայերէն գիտցող հայ աղջկայ հետ ամուսնութիւնը՝ որպէսզի ընտանեկան յարկէն ներս վերականգնի հայերէնը: ...Եագուպիէցի լատին ընտանիքներէն ոմանք իրենց զաւակները հայոց վարժարանը կ'ուղարկեն, հայերէն սորվիլ կը պահանջեն: Անթէղ մը կայ, բայց բոցի ինչպէ՞ս վերածել: Ելք չունին. ինչպէ՞ս համատեղել «լատին» ու «հայ» հասկացութիւնները, ազգային ու վերազգային-ապազգային գաղափարները» (էջ 201): Հեղինակն այս մտահոգիչ հայեցակարգային հարցադրումով ավարտում է իր գիտական խիզախությամբ հազեցած աշխատությունը առաջին անգամ բացախոսելով հայության դավանաբանական ռազմավարության վերաբժնորման հույժ արդիական անհրաժեշտությունը:

ՍՎԱԶԼՅԱՆ Վ. Գ.

Բանասիրական գիտությունների դոկտոր

